

## **ՖԵՐԴԻՆԱԼԴ ԴԸ ՍՈՍՅՈՒՐԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ ԵՎ ԲԵԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

**Բ. Գ. Ք., դոց. ԴԱՎԻԹ ԳՅՈՒԼՋԱՏՅԱՆ**

Հայ լեզվաբանական միտքը, սաղմնային ձևով կազմավորվելով 5-րդ դարում, ժամանակ առ ժամանակ կրել է տվյալ փուլի ուսմունքների ազդեցությունը, ապա լեզվական իրակությունների ինքնուրույն մեկնություններով հայոց լեզվի ուսումնասիրության հարցում այդ ինքնուրույնությունը նաև հասցրել ինքնատիպության: Ասվածն առավելապես հաստատվում է 20-րդ դարի հայ լեզվաբանության ձեռքբերումներով, որոնք, ինչպես ուրիշ մասնավոր լեզվաբանական տեսությունների դեպքում, հայոց մեջ ևս արդյունք էին նշված դարի սկզբին լույս աշխարհ եկած սոսյուրյան գաղափարների և հայեցակարգի հետագա զարգացման ու կատարելագործման:

Բոլոր գիտությունների պատմության մեջ էլ կան բախտորոշ ժամանակներ և դրանց մեջ՝ առանցքային անուններ, որոնցով վաղ թե ուշ առանձնացվում է տվյալ գիտության ծաղկման համապատասխան փուլը՝ որպես նրա առաջընթացն ապահովող հայեցակարգային ու հայեցակերպային հիմնարարությամբ հագեցած խոսուն ժամանակաշրջան: Լեզվաբանության պատմության մեջ այդպիսի ժամանակաշրջաններ են 19-րդ և 20-րդ դարասկզբները՝ համապատասխանաբար 10-ից 30-ական թվականներով, ինչպես նաև 1980-ականներից սկզբնավորված արդի լեզվաբանությունը, որի առաջատարը, մեր խորին համոզմամբ, 20-րդ դարի վերջին քառորդի հայ լեզվաբանական, առավել ստույգ՝ լեզվիմաստասիրական և լեզվանշանագիտական իրականությունն է:

1916-ին Ֆ. դը Սոսյուրի անվամբ լույս տեսած «Ընդհանուր լեզվաբանության դասընթացը» որոշ պայմանականությամբ է վերագրվում Սոսյուրի հեղինակությանը: Իրականում գրքում արծարծված գաղափարների և ո՛չ գրավոր շարադրանքի հեղինակն է նա: Հիշյալ գրքի հրատարակումից երեք տարի առաջ է մահացել Սոսյուրը՝ ունենալով միայն թուուցիկ գրառումներ իր եռանյա՝ իրարից տարբերվող դասախոսություններից: Լեզվաբանի մասնակի և ուսանողների մանրակրկիտ գրառումներից է գոյացել նրա տպագիր գիրքը, առանց որի դժվար է պատկերացնել, թե ինչ ընթացք կունենար լեզվաբանության զարգացումը: Թե՛ Սոսյուրի, թե՛ նրան հաջորդող բոլոր լեզվաբանների բախտն է բերել, որ առաջինն ունե-

ցել է Շառլ Բալլիի և Ալբեր Սեշելի նման երախտագետ սամեր, և սոսյուրյան գաղափարների մեկտեղման ու դրանց հրապարակման համար ուսուցչին ու աշակերտներին հավասարաչափ ենք պարտական:

Լեզվաբանական գիտության մեջ Սոսյուրի զբաղեցրած տեղի ու դերի մասին բավական է հիշատակել մեկ փաստ. նրա տեսության հիմքի վրա է ձևավորվել կառուցվածքային լեզվաբանությունը՝ երեք դպրոցով՝ Պրահայի գործառական կառուցվածքաբանությունը, Կոպենհագենի լեզվագիտությունը (գլոսսեմատիկա), ամերիկյան նկարագրական լեզվաբանությունը: Թե՛ այդ դպրոցները, թե՛ Սոսյուրի այս կամ այն գաղափարի հիմքով ձևավորված տեսություններն ու գիտակարգերը, փաստորեն, կազմավորվել են նրա տեսության թվացյալ, երբեմն էլ իրական հակասությունները վերացնելու մղումով («իրական հակասություն» արտահայտությունը ևս վերապահումով ենք գործածում՝ վերստին հիշելով այդ գրքի՝ ոչ Սոսյուրի ձեռամբ ստեղծված լինելու փաստը):

Եվ ընդհանուր, և՛ հայ լեզվաբանության հայեցակարգային կերպընկալման համար կարևոր նշանակություն ունի Սոսյուրի՝ լեզվական նյութի քննության երկատման (դիքոտոմիա) կամ կառուցվածքային երկչափ սկզբունքը, որով նա հակադրվում է ընդհանուր լեզվաբանության հիմնադիր Վ. Ֆոն Յունբուլդտի տրամախոսական (դիալեկտիկական) միաչափության սկզբունքին: Գ. Ջահուկյանը լեզվաբանության պատմության՝ Սոսյուրով սկզբնավորված փուլն իրավացիորեն համարում է համակարգային-վերլուծական լեզվաբանության շրջան: Այդ շրջանը վերլուծական է, քանի որ առաջին անգամ հստակորեն առանձնացվում են լեզուն և խոսքը (սա Սոսյուրի հիմնարար երկատումն է, և մնացյալ երկատումները սրանից ելնում ու հանգում են սրան), և համակարգային է, քանի որ հիշյալ երկատումը բխեցվում է լեզվախոսքային ամբողջությունից՝ լեզվախոսությունից: Դետագայուն կառուցվածքաբանները, ընդունելով այդ երկատումը, մի տեսակ անտեսում են նրա համակարգային հենքը, և հաճախ սոսյուրյան այս ելակետային երկատումը՝ լեզու-խոսք բևեռներով, չհատվող փոխուղղահայացների անմեկնելի տպավորություն է թողնում, թեև այդ նույն կառուցվածքաբաններն ընդունում են նաև Սոսյուրի՝ լեզուն համակարգային իրողություն դիտելու դրույթը: Այս իմաստով, եթե Սոսյուրի (վեր)ստեղծած գիտությունը, փաստորեն, տրամաբանական արտածության եղանակով հիմնավորված վերլուծական լեզվաբանություն էր, ապա նրան հաջորդած կառուցվածքաբանությունը՝ արտածելին անտես առած առկախ վերլուծյալ լեզվաբանություն:

Ինչպես ասացինք, սոսյուրյան լեզվաբանության հիմնավորված վերլուծականությունը հակադրվում է լեզվաբանության պատմության երկրորդ փուլի

առանցքը կազմող հումբոլդտյան համադրականությանը: Լեզվի տրամաբանական քննության այն եղանակը (տվյալ դեպքում՝ համադրությունը), որով առաջնորդվում էր Վիլհելմ ֆոն Յունբոլդտը, կարիք չունեն առանձնաբար հակադրվելու հարաբերակից վերլուծական բևեռին, որովհետև այն հիմնված էր շատ ավելի խոր մի եղանակի՝ տրամախոսության վրա, որը, իր առերևույթ միաչափությամբ համադրական լինելով, նույնքան էլ վերլուծական էր, ուստի նրա զննության արտաքուստ մակածական բնույթը նաև՝ արտածական էր: Վերստին անդրադառնալով Ֆ. դը Սոսյուրի որդեգրած մեթոդաբանությանը՝ պարտ է նկատել, որ անհրաժեշտաբար կատարած նրա վերլուծությունները կարիք ունեին հետագա համադրման, որն էլ թե՛ Սոսյուրի երկչափ, թե՛ Յունբոլդտի տրամախոսաբար միաչափ սկզբունքների հաշվառմամբ իրագործում է նորագույն շրջանի լեզվաբանությունը՝ ի դեմս հայ իմաստասեր լեզվաբան Էդուարդ Աթայանի՝ հիմնված արդեն ոչ թե սոսկական համադրականության, այլ գերհամադրականության սկզբունքի վրա:

Սոսյուրի՝ լեզու / խոսք երկատմանը հարաբերակցվող երկատուններ են ներքին լեզվաբանություն / արտաքին լեզվաբանություն, լեզվի լեզվաբանություն / խոսքի լեզվաբանություն<sup>1</sup>, համաժամանակություն / տարաժամանակություն և, ըստ այդմ, համաժամանակյա լեզվաբանություն / տարաժամանակյա լեզվաբանություն, նշանակիչ / նշանակյալ և, համապատասխանաբար, նշանակչի՝ գծային / նշանակյալի ոչ գծային բնույթ և սրանց զուգորդվող շարակարգային հարաբերություններ / զուգորդային հարաբերություններ և այլ զուգանդամներով հասկացական փնջերը: Չկա, թերևս, Սոսյուրի՝ լեզվի տեսություն մտցրած որևէ էական հասկացություն, որի վրա հիմնված և որն այս կամ այն չափով վիճարկած չլինեն հետագա լեզվաբանները: Սակայն, որպես կանոն, այդ վիճարկումներն էլ զերծ չէին հակասություններից, ուստի հետսոսյուրյան շրջանի լեզվաբանության զարգացումը մի տեսակ հակասությունների և հակասությունների բացահայտմամբ բերած հակասությունների վերացման զավեշտահարույց ուղով է ընթացել: Այսպես՝ զլոսսեմատիկայի՝ հանրահաշվական հարաբերությունների լեզվաբանության հիմնադիր Լուի Ելմսլևի՝ սոսյուրյան «զուգորդային (ասոցիատիվ)» տերմինով բնորոշվող լեզվական գոյաշերտը «հարացուցային (պարադիգմատիվ)» անվանմամբ փոխարինելը ողջունել է լեզվաբանական հանրությունը, քանի որ իրոք

<sup>1</sup> Հայերեն տեղին կլիներ այս երկատունը թարգմանել առանց «լեզու» և «խոսք» բառերի, որով կվերանային հասկացությունների անվանման՝ մի դեպքում՝ նույնաբանական («լեզվի լեզվաբանություն»), մյուս դեպքում՝ ասես զոռով կարկատանված տարաբանական («խոսքի լեզվաբանություն») մոտեցումները. հարկ է պարզապես դրանք կոչել, համապատասխանաբար, լեզվաբանություն և խոսք(ը)աբանություն:

խրախուսելի չէր լեզվաբանական իրակությունը հոգեբանական տերմինով «հանդերձավորելը»: Սակայն լեզվաբանական հասկացությունը լեզվաբանական անվանմամբ տերմինավորելը դեռ լեզվի էության բացահայտում չի նշանակում: Բանն այն է, որ լեզվական հորինվածքը տրամաբանական, հոգեբանական և նյութական (հնչյունական) շերտերի բաղկացություն է, և հոգեբանական անվանումը փոխարինելով՝ Ելնսլը փաստորեն լեզվի հոգեկան պահն էլ հետն է արտամղում լեզվատիրույթից: Ավելին. նա շուտով «ազատագրում է» լեզուն նաև տրամաբանական գոյությունից՝ լեզվի բնորոշման համար թողնելով ինքնանպատակության հասնող սոսկ ձևայնացված կախումներ, գործառույթներ ու հարաբերություններ. սա, թերևս, լավագույն ապացույցն է մեր՝ վերը նշած առկախ վերլուծականության նկատումի. պարզապես չկա հիմնավորումն այն բանի, թե ինչով է, որ հարացույցը՝ լեզվական, իսկ շարակարգը խոսքային իրողություն է, այսինքն՝ անմեկնելի է դառնում լեզվին ներքուստ հատուկ գոյամակարդակների իսկությունը: Ասենք նաև, որ Սոսյուրի բնորոշած զուգորդային հարաբերությունները, հոգեբանականից բացի, որոշ առումով ներառում են նաև տրամաբանական շերտը, քանի որ նա զուգորդումը նկարագրելիս խոսում է նաև հարացույցի մասին:

Եռաշերտ նկարագրության առաջին փորձը կատարում է ֆրանս. լեզվաբան Լյուսիեն Տենիերը՝ իր «Կառուցվածքային շարահյուսության հիմունքները» գրքում ներկայացնելով լեզուն կարգային, կառուցվածքային-գործառական և գծային ոլորտներով<sup>1</sup>: Այստեղ էլ միանգամայն հստակ են լեզվի տրամաբանական և նյութական շերտերը, իսկ ինչ վերաբերում է հոգեբանական շերտին, ապա, ըստ երևույթին, նկատի ունենալով տրամաբանականից խոսքայինին անցնելու պատեհային իրադրայնությունը, Տենիերը դրան մի մասով՝ տրամաբանական («կառուցվածքային»), մի այլ մասով խոսքային գործառմանը հարիր («գործառական») անվանում է տալիս: Լեզվական գոյամակարդակների եռամասնյա մեկնությունը տրամաբանական վախճանակետին է հասցնում է. Աթայանը, որոնց համար առաջարկում է հայերեն գտնված տերմինակարգ, այն է՝ լեզվական համակարգ (լեզվի հասկացական կամ տրամաբանական տիրույթ), խոսքային գծակարգ (լեզվի նյութական արտահայտության կամ խոսքային տիրույթ) և այս երկու մակարդակն ակնթարթորեն իրար ագուցող լեզվախոսքային շարակարգ (լեզվի պատկերակցական կամ հոգեբանական տիրույթ)<sup>2</sup>: Ինչպես տեսնում ենք, սոսյուրյան և աթայանական շարակարգային գոյամակարդակները չեն համապատասխանում. առա-

<sup>1</sup> Տե՛ս Լ. Теньер, Основы структурного синтаксиса, М., 1988, էջ 27 -32, 61 – 62.

<sup>2</sup> Տե՛ս Է. Աթայան, Լեզուների ձևաբանական տիպաբանության առարկան և «անհատական լեզվական ձևի» բացահայտման խնդիրը // Բանբեր Երևանի համալսարանի (այսուհետ՝ ԲԵՅ), Ե., 1988, հմ. 2:

ջինը խոսքային ըմբռնում է, և դրան Աթայանի եռատած գոյամակարդակներից համընկնում է գծակարգայինը:

Տեղեկացնենք, որ հայ լեզվաբանության մեջ Սոսյուրի և նրա հետևողությանը կառուցվածքաբանների մեկնությամբ բնութագրված լեզվական գոյամակարդակների նկատմամբ լիակատար վստահություն չի եղել ոչ միայն դրանց քանակի, այլև հարացույցը՝ լեզվին և շարակարգը խոսքին հատկացնելու մեքենայական մոտեցման առումով: Այսպես՝ ըստ Գ. Ջահուկյանի՝ շարակարգային կաղապարը, որ ցույց է տալիս տվյալ լեզվում հաստատված կանոններով միավորների հաջորդման կարգը, վերագրվում է լեզվին, իսկ խոսքին վերաբերում են կաղապարի խոսքային մասնավոր իրացումները<sup>1</sup>:

Հարացուցայնության ու շարակարգայնության և լեզվի կառուցվածքային մակարդակների օրինաչափ հարաբերակցության նախանձելի բացահայտում է կատարում Էդուարդ Աղայանը: Սակայն հարացույցն ու շարակարգը նա դիտարկում է որպես ներլեզվական հարաբերություններ՝ անկախ դրանց՝ լեզու / խոսք գոյաշերտերի հետ ունեցած փոխհարաբերությունից: Բանն այն է, որ Է. Աղայանը լեզվի և խոսքի՝ որպես ընդհանուրի և մասնակիի կամ առանձինի տարբերակված նույնացում է կատարում՝ դրսևորված խոսքը համարելով լեզվական փաստ՝ հե՛նց լեզու, բայց միայն՝ մասնակի արտահայտությամբ: Այս հակադրամիասնությունը, սակայն, նա չի պայմանավորում հարացույցով ու շարակարգով, ասել է՝ դրանք չի դիտում որպես լեզվական գոյամակարդակներ, այլ, ինչպես ասացինք, թե՛ լեզվին ամբողջությամբ, թե՛ նրա խոսքային համապատասխան դրսևորմանը հատուկ (ներլեզվական) հարաբերություններ, որոնք կառուցվածքային մակարդակներում որոշվում են փոխարկման ու հատուկավորման «չափումներով», որոնց կանդրադառնանք քիչ հետո: Ասվածից չպետք է ենթադրել, թե Է. Աղայանը հետևում է Գունբուրդտի տրամախոսական միաչափության սկզբունքին (թեև չի էլ անտեսում այն): Այնուամենայնիվ նա հստակ շերտավորում կատարում է լեզվի և խոսքի «արանքում», և այն, ելնելով հեղինակի դասդասման եղանակից, անվանում ենք գործունեութենական շերտավորում, այն է՝ ա) լեզվական գործունեություն (= հասարակության հաղորդակցական գործունեություն), բ) խոսողական գործունեություն (անհատականից հասարակական ուղղվածությամբ), գ) խոսքային գործունեություն (հասարակականից անհատական ուղղվածությամբ)<sup>2</sup>: Հիշյալ գրքի հետագա շարադրանքում Է. Աղայանը խոսողական ու խոսքային գործունեությունից արտածում է խոսքը՝ ավելացնելով հետևյալ նկատումը. «Ոչ մի առանձին խոսք...

<sup>1</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 101:

<sup>2</sup> Տե՛ս Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 43:

չի կարող ամբողջությամբ ընդգրկել լեզուն, սպառել այն: Ավելին. հասարակության ողջ լեզվական գործունեությունը նույնպես չի կարող սպառել լեզուն (ընդգծումն իմն է՝ Գ. Գ.), եթե մենք լեզու ասելով հասկանում ենք ոչ միայն նրա արդեն ունեցած, իրացված համակարգը, .... այլ նաև այդ համակարգի հնարավորությունները.... Այսպիսով՝ մենք խոսքը դիտում ենք որպես լեզվի իրացված, օբյեկտիվ ռեալություն դարձած մի մասնիկը .... և դրանով իսկ նույնացնում ենք խոսքը լեզվի հետ: Բայց.... դա առանձինի նույնությունն է ընդհանուրի հետ....»<sup>1</sup>: Քանի որ Է. Աղայանը ոչ միայն գործունեութենական շերտերից բխեցնում է խոսքը, այլև դրանցից դուրս ու վեր է դիտարկում լեզուն՝ որպես այդ շերտերն ու խոսքը ամփոփող հնարավորությունների համակարգ, փաստորեն, համաձայն նրա նկատումների, ունենում ենք լեզվական հորինվածքի հինգ գոյամակարդակ, որը, ինչպես կտեսնենք, դյուրությամբ հարաբերակցվում է Է. Աթայանի առանձնացրած եռամակարդակությանը: Ըստ էության, Է. Աղայանի վեր հանած գոյամակարդակները հետևյալներն են՝ ա) լեզու (որպես հնարավորությունների համակարգ), բ) լեզվական գործունեություն, գ) խոսողական գործունեություն, դ) խոսքային գործունեություն, ե) խոսք (որպես իրացված լեզու): Բաղդատելով այս շերտերը աթայանական գոյամակարդակների հետ՝ դժվար չէ նկատել, որ առաջին և հինգերորդ կետերը նույնացվում են, համապատասխանաբար, լեզվական համակարգի և խոսքային զծակարգի հետ, իսկ երկրորդից չորրորդ կետերը լեզվախոսքային շարակարգի ենթաշերտերն են, որոնց բացահայտումը խիստ կարևոր էր լեզվաբանության համար: Այն, որ այդ ենթաշերտերն իրոք լեզվի հոգեբանական անցումային տիրույթին (շարակարգին) են պատկանում, հստակ երևում է նաև դրանց ընդհանրական անվանումից՝ գործունեություն: Է. Աղայանի տեսական համակարգի մեր այս մեկնության փորձը արդարացված է նաև նրանով, որ ներդաշնակություն ենք տեսնում այս լեզվաբանի և Վ. Ֆոն Յունբուլդտի տրամախոսական ներհակությունների բացահայտման միջև: Չէ՞ որ լեզվի՝ որպես գործունեության (ենթագայ) դրույթը Յունբուլդտից է գալիս, իսկ նա նկատել է տվել լեզվի ոչ միայն գործունեության, այլև պատրաստի գործ (էրգոն) լինելու իսկությունը, և դա Է. Աղայանի (նաև Է. Աթայանի) տեսության մեջ արտացոլված է լեզվական համակարգին տված բնութագրությամբ: Արդ՝ մեզ մնում է պարզել, թե ինչ հարաչափերով է գնահատում Է. Աղայանը հարացուցային և շարակարգային հարաբերությունները: Ըստ այս լեզվաբանի՝ շարակարգային շարքի միավորները ենթակա են հատուկավորման (segmentation), հարացուցային շարքի միավորները՝ փոխարկման

<sup>1</sup> Ա՛նդ, էջ 115:

(substitution): Քանի որ տվյալ մակարդակի հատույթները (segments) այդ իսկ մակարդակի միավորների հոդավորիչներն են (constituents), ապա շարակարգային շարքում գործ ունենք հոդավորիչների հարաբերության հետ, և քանի որ այդ շարքը գոյանում է հոդավորիչ-հատույթների հոդավորմամբ, ապա շարակարգային շարքը միավորների համակցային հարաբերություն է: Գալով հարացուցային կարգին՝ է. Աղայանը փոխադարձաբար իրար փոխարինող (= փոխարկման ենթակա) միավորներն անվանում է փոխարկիչներ (substitutors // substituents): Հարացուցային շարքում գործ ունենք փոխարկիչների միջոցով ներկայացվող բաղադրույթների (integrants) հարաբերության հետ, ուստի հարացույցը տվյալ մակարդակի փոխարկիչների կարգն է, և քանի որ փոխարկիչները փոխադարձաբար իրար փոխարինող միավորներ են, ուստի հարացույցում, ի տարբերություն շարակարգի, ունենք միավորների հակադրական հարաբերություն<sup>1</sup>:

Վիճարկման առարկա է եղել Սոսյուրի երկատած ժամանակային հայեցակետը և՛ համաժամանակյա (սինքրոնիկ) և տարածամանակյա (դիաքրոնիկ) բևեռներով: Սոսյուրը խոսում է նաև հարածամանակյա (պանքրոնիկ) տեսակետի մասին, սակայն զգուշացնում է, որ այդպիսի բացատրություն ենթադրող մասնավոր իրողությունը որևէ լեզվի պատկանել չի կարող: Իսկ ահա Ելմսլը, խնդիր ու նպատակ ունենալով ստեղծել լեզվաբանական համընդհանուր տեսություն, լեզվի դիտարկման միակ իրական հայեցակետ է համարում հարածամանակությունը կամ ապաժամանակությունը (աքրոնիա): Հետսոսյուրյան լեզվաբանությունը վիճարկում է նաև Սոսյուրի այն դրույթը, թե լեզվի համակարգային հետազոտություն հնարավոր է իրականացնել միայն ներակայորեն (ներակա=immanent) և համաժամանակյա հայեցակետով: Լեզվաբանական հայեցակետերի և լեզվաբանության ուղղությունների ուշագրավ հարաբերակցություն է բացահայտում իր «Լեզվաբանության հիմունքներում» Էդուարդ Աղայանը: Որդեգրելով Սոսյուրի պատմական և կայական (ստատիկ) ժամանակային հայեցակետերը, այլև հիմք ընդունելով նրա՝ հարածամանակությանը վերաբերող ակնարկային դիտողությունները՝ է. Աղայանը նկատել է տալիս, որ պատմական, կայական և հարածամանակյա հայեցակետերն ընկած են լեզվաբանության երեք ուղղությունների հիմքում, որոնք են՝ ա) կառուցվածքային (նկարագրական) լեզվաբանություն կամ, ըստ ժամանակային բնութագրության, համաժամանակյա լեզվաբանություն, բ) պատմահամեմատական լեզվաբանություն կամ տարածամանակյա լեզվաբանություն, գ) տիպաբանական լեզվաբանություն կամ հարածամանակյա լեզվաբանություն<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս է. Աղայան, ժամանակակից հայերենի հալովումը և խոնարհումը, Ե., 1967, էջք 69-76:

<sup>2</sup> Տե՛ս է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, էջք 124 – 131:

Սոսյուրն իր ընդհանուր լեզվաբանության դասընթաց-դասախոսություններով էական դեր ունի նաև ընդհանուր նշանագիտության կազմավորման հարցում: Ըստ Սոսյուրի՝ «... կարելի է պատկերացնել այնպիսի մի գիտություն, որն ուսումնասիրի նշանների գործառնությունը հասարակական կյանքի ներսում»՝ կազմելով ընդհանուր կամ հասարակական հոգեբանության մի բաժինը<sup>1</sup>: Այդ գիտությունը Սոսյուրը, ի տարբերություն իր նախորդների և հաջորդների, ամվանում է ոչ թե նշանագիտություն (սեմիոտիկա), այլ նշանաբանություն (սեմիոլոգիա), որի մի մասն է միայն լեզվաբանությունը: Այն, որ նշանաբանությունը, ըստ Սոսյուրի, հոգեբանական գիտություն է, բխում է նրա՝ նշանին տված բնորոշումից: Սոսյուրի ձևակերպման համաձայն՝ նշանը հասկացության և լսողական պատկերի զուգորդում է<sup>2</sup>: Նշանի արտահայտական կողմը Սոսյուրը պայմանականորեն է նյութական համարում. նրա համոզմամբ նշանի երկու եզրերն էլ հոգեկան բնույթ ունեն, իսկ նյութական կողմ կամ եզր ասելով՝ նկատի ունի ոչ թե մարմնավորված հնչյունը, այլ նրա հոգեկան դրոշմվածքը մեր զգայարանների վրա և դրանցով մեզ հաղորդված պատկերացումը: Թեև նշանի՝ վերն ընդգծված սահմանումից ամենևին չի բխում, թե նշանի երկու եզրերն էլ հոգեկան բնույթ ունեն, քանի որ դրանցից մեկը հասկացությունն է (այսինքն՝ այդ եզրը տրամաբանական բնույթ ունի), այնուամենայնիվ, կառուցվածքաբանությունից սկսած մինչև մեր օրերը, նշանի արտահայտության ոլորտ ասելով, նկատի ունեն հենց բուն նյութական՝ հնչյունական կողմը: Տեղին է, ինչ խոսք, մատնանշումը, որ նշանը նաև նյութական մարմին է, սակայն չէր կարելի նրանից օտարել հոգեկան շերտը: Ահա՛ ևս մի նուրբ պահ, որով կարևորվում է է. Աթայանի՝ լեզվական հորինվածքի չէ՛ թե երկատված, այլ եռատված դիտարկումը, որով արևերես են բերվում նշանի թե՛ տրամաբանական-հասկացական, թե՛ հոգեբանական-պատկերակցական և թե՛ նյութական-հնչական եզրերը: Ինչ վերաբերում է նշանագիտությունը (ըստ Սոսյուրի՝ նշանաբանությունը)՝ հոգեբանության, լեզվաբանությունն էլ նշանաբանության մի բաժին լինելու տեսակետին, ապա այն վաղուց է հերքվել. գիտությունների ժամանակակից դասակարգմամբ սրանք, իրենց ունեցած աղերսներով հանդերձ, իսկապես առանձին ոլորտներ են, իսկ ընդգրկունության առումով նշանագիտությունը շատ ավելի համապարփակ է, քան հոգեբանությունը: Գալով նշանի մյուս հարաչափերին, մասնավորապես՝ անփոփոխելիության ու փոփոխելիության, պայմանականության ու բնականության, այլև երկրորդ զուգանդամների

<sup>1</sup> Ֆերդինանդ դը Սոսյուր, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 2008, էջ 32:

<sup>2</sup> Ա՛նդ, էջք 104 – 105:



անմիջականորեն աղերսվող հիմնավորվածության (մոտիվացվածության) ու չհիմնավորվածության ներհակություններին՝ պետք է ասել, որ առաջին զույգի հարցում Սոսյուրը նախանձելի տրամախոս է. վստահորեն է մեկնում նշանի թե՛ փոփոխելի, թե՛ անփոփոխ լինելու հատկությունները: Նույնը, սակայն, չի կարելի ասել նշանի պայմանականության և բնականության սոսյուրյան մեկնաբանության մասին: Լեզվական նշանը, ըստ նրա, զերազանցապես պայմանական է, և Լեզվի մեջ չնչին տոկոս են կազմում բնանշանները: Այս տեսակետը վաղ շրջանից ընդվզում է առաջ բերել Լեզվաբանների շրջանում, և առաջին վիճարկողը հենց Սոսյուրի աշակերտն է՝ Շառլ Բալլին: Հարցին հետազայում անդրադարձել են Էմիլ Բենվենիստը (Ճիշտ է, փոքր-ինչ պարզունակորեն, որովհետև Լեզվական նշանի բնականության օգտին խոսելիս ավելին չի ասում, քան Սոսյուրն էր ասել այդ նշանի հնարավոր բնականության մասին), Ռոման Յակոբսոնը, հայ իրականության մեջ՝ Էդմոն Ավետյանը, Էդուարդ Աթայանը, Սերգեյ Վարդազարյանը, Աշոտ Աբրահամյանը և այլք, թեև զուգահեռաբար (այսօր էլ) կա (Սոսյուրից առավել հատու) տեսակետ, թե Լեզվական նշանը միայն պայմանական է: Է. Աթայանը, նշանը համարելով նաև՝ բնական, այստեղ ևս հանդես է բերում եռաչափ քննության իր հայեցակերպային բնութագիրը՝ նշանասերումը դիտարկելով սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունների ոլորտում, հաղորդակցման կադապարների համապատասխան կազմը ներկայացնելով հարաբերությունների վեց տիպով, որոնցից բարձրագույնն է հռչակում ներքին խոսքը՝ ինքնահաղորդակցումը<sup>1</sup>: Աշոտ Աբրահամյանը ոչ միայն նշանի բնականության փաստն է բնականորեն ընդունում՝ նշանասերումը դիտարկելով արտալեզվական և Լեզվական իրականությունների հանգուցակետում, այլև նշանի երկու կողմերի՝ բովանդակության և արտահայտության հակադրման հարաբերականությունն է փաստում՝ բացահայտելով դրանց փոխանցման հնարավորությունները: Իր վերջին ուսումնասիրություններում բովանդակությունից արտահայտություն անցումը նա համարում է բնածայնական եղանակով կատարվող փոխաբերության դրսևորում, իսկ հակառակ անցումը՝ ձայնարկային եղանակով կատարվող փոխանունության դրսևորում: Լեզվական նշանի բնականության ու պայմանականության առումով հետաքրքիր եզրահանգման է զալիս հեղինակը. Լեզվական նշանը կրկնակի հիմնավորված է (իմա՝ բնական է) հակադիր անցումների զուգակցմամբ, իսկ անցակետերի միջա-

<sup>1</sup> Տե՛ս Է. Աթայան, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Ե. 1981, էջք 236 – 266, այլև Նշանը սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունների ոլորտում // ԲԵՀ, Ե., 1990, հմ. 3:

կայքում նրա դրսևորումը պայմանական է<sup>1</sup>:

Սոսյուրից հետո լեզվաբանության մեջ աղմկահարույց թեմաներից մեկն էլ շարույթն էր՝ տարակերպ մեկնությունների առատությամբ: Այս հասկացությունը գրեթե միաժամանակ իրարից անկախ լեզվաբանություն են բերել Բոդուեն դե Կուրտենեն և Ֆ. դը Սոսյուրը: Հայերեն «շարույթ» տերմինը համարժեքն է ֆրանսերենում հունարենից փոխառած «syntagme» բառի (ռուսերենում ևս այդ փոխառությունն է գործում): Ըստ դե Կուրտենեի՝ syntagme-ը շարահյուսական նվազագույն միավորն է: Սոսյուրն այդ նույն տերմինը գծածում է երկու տարբեր հասկացության համար: Մի իմաստով syntagme-ը գործածվում է նշելու համար լեզվական գոյամակարդակներից մեկի անվանումը, մյուս իմաստով՝ նշելու համար լրացում-լրացյալ հարաբերության մեջ գտնվող շարահյուսական միավորը (կառույցը՝ որպես բաղադրյալ միավոր): Եթե սրան էլ ավելացնենք այն, որ Լ. Շչերբան դե Կուրտենեի թույլտվությամբ վերջինից տարբեր իմաստով է գործածում «syntagme» բառը՝ նշանակելու համար հնչյունական այն միասնությունը, որ խոսք-մտքի գործընթացում իմաստային միասնական ամբողջություն է արտահայտում և կարող է բաղկացած լինել և՛ մեկ կշռությալին խմբից, և՛ դրանց ամբողջական շարքերից, այլև այն, որ լեզվաբանների մեծ մասի, թող թույլ տրվի ասել, մակերեսային ընթերցանությունը առեղծվածորեն մեկտեղում է ոչ մի հնարքով ի մի չբերվող այս տարակարգ հասկացությունները, երևի կամբողջանա պատկերը կես դարից ավել լեզվաբանության մեջ տիրող քառասյին վիճակի: Սակայն գերագույն առեղծվածն այն է, որ այս քառասյին մակարդակով էլ անցյալ դարի 70-ականներին լեզվաբանության մեջ արդեն մի նոր գիտակարգ էր ձևավորվել՝ շարութաբանությունը (սինտագմատիկա): Թերևս հարկ է գիտությունների կազմավորման հիմնական նախադրյալ դիտել նրանցում տիրող քառասյին կացությունը...

Ինչևէ, իսկապես այսօր կա շարութաբանությունը՝ որպես գիտակարգ, և դը Սոսյուրից ու դե Կուրտենեից հետո առավելապես սոսյուրյան տրամաբանությամբ այն տեղաշարժող առաջամարտիկը նույնպես Սոսյուրի աշակերտն էր՝ Շառլ Բալլին, որի շարութաբանական ուսմունքը լեզվաբանական աշխատություններում զարմանալիորեն անտեսվում է, թեև գիտական ուսումնասիրություններում չեն նվազում հղումները նրա համապատասխան գրքին (խոսքը «Ընդհանուր և ֆրանսիական լեզվաբանություն» երկին է վերաբերում): Այս հարցում ևս արդի հայ լեզ-

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Ա. Ս. Աբրահամյան, Բովանդակության և արտահայտության հակադրման հարաբերականությունը լեզվում // ԲԵՅ, Ե., 1988, հմ. 1, այլև Նշանակյալի և նշանակիչի կրկնակի ներդաշնակումը լեզվում // Նշան, համակարգ, հաղորդակցում (Յոթվածների ժողովածու՝ նվիրված է Աթայանի հիշատակին), Ե., 2011, էջ 20 -26:

վաբանությունը նվաճումներ արձանագրել է: Իրարից տարբեր, ինքնատիպ և հետաքրքիր շարութաբանական դիտարկումներ են կատարել է. Աթայանն ու Գ. Ջահուկյանը: Ըստ Աթայանի՝ շարույթը շարահյուսական կառույց է, որը նվազագույն դրսևորմամբ երկանդամ է: Սրա ծավալումը տեղի է ունենում ընդհանուր կամ կենտրոնական տարրի շնորհիվ, որով համապատասխան համակցություններ են կատարվում՝ ձևավորելով փնջային կառուցվածքներ: Ըստ Ջահուկյանի՝ շարույթը նախադասության ձախակողմյան տիրույթին պատկանող հատվածն է, ուստի կամ գոյական է, կամ նրա ծավալված տարբերակը: Շարույթի ուսումնասիրությունն այս հեղինակը կատարում է իր մշակած փոխկաղապարման մեթոդի օգնությամբ, որով բացատրվում է համապատասխան կանոններով համասեռ կաղապարներից տարասեռ կաղապարների՝ որպես գերշարույթների և լիաշարույթների ձևավորման ընթացքը: Այսօր շարութաբանությունն իբրև ուսումնասիրության մեթոդներ է ընդունում մաթեմատիկական բազմությունների հատումն ու միավորումը, ինչպես նաև հետազոտությունն ամբողջացնում է համակցաբանության (կոմբինատորիկա) ձեռքբերումներով: Ընդգծվում է, որ շարութաբանության մեջ մաթեմատիկական մեթոդաբանության գործադրումն ինքնանպատակ չէ, քանի որ շարակազմության ուսումնասիրությամբ պարզվում է հետևյալը. խոսողության ընթացքում շարահյուսական միավորների և կառույցների համակցման հանրահաշվական ճշգրտությունը վկայությունն է այն բանի, որ մաթեմատիկական օժտվածությունը մարդուն հե՛նց լեզվականորեն է տրված:

Այսպիսով՝ Սոսյուրին հաջորդած ողջ ժամանակաշրջանում՝ ընդհուպ մինչև մեր օրերը, հայ լեզվաբանությունը համընթաց զարգացում է ունեցել ընդհանուր լեզվաբանությանը՝ ոչ միայն ըստ հարկի օգտվելով վերջինիս մեջ մշակված մեթոդաբանությունից, այլև իր մշակած նոր մեթոդներն ու հայեցակերպերն ընդհանուր լեզվաբանությանը հրամցնելով: Ավելին. հայրենական լեզվաբանությունը լեզվիմաստասիրության և լեզվանշանագիտության ասպարեզում այնպիսի ձեռքբերումներ է արձանագրել, որոնց դեռևս մասնակիորեն է հասու համաշխարհային լեզվաբանական միտքը: Մեր կանխատեսումն այն է, որ լեզվաբանության պատմության նոր՝ չորրորդ փուլն է ձևավորված այսօր, որի առաջատարը 20-րդ դարի վերջին քառորդի հայ լեզվաբանությունն է<sup>1</sup>:

<sup>1</sup> Լեզվաբանության նորագույն փուլին վերաբերող մեր պատկերացումներն ամփոփված են տողերիս հեղինակի՝ վերջերս լույս տեսած մի հոդվածում. տե՛ս Գ. Գյուլզարյան, Վարկած լեզվաբանության պատմության նորագույն պարբերացման (Եղուարդ Աթայանի լեզվափոխոսության կայացակարգի հենքով) // Նշան, համակարգ, հարդրակցում, էջք 63 – 73:

**ОТРАЖЕНИЕ И ПЕРЕОСМЫСЛЕНИЯ ЛИНГВИСТИЧЕСКОЙ КОНЦЕПЦИИ  
Ф. ДЕ СОССЮРА В АРМЯНСКОМ ЯЗЫКОЗНАНИИ**

**ДАВИД ГЮЛЬЗАТЯН**

**РЕЗЮМЕ**

В последней четверти 20-го века в отечественном языкознании в области лингвофилософии и лингвосемиотики были зафиксированы такие достижения, до которых мировая лингвистическая мысль еще не дошла. По мысли автора, в истории языкознания сегодня формируется новый, четвертый этап, ведущие позиции в котором принадлежат армянской лингвистике указанного периода.

**THE REFLECTIONS AND REASSESSMENTS OF FERDINAND DE SAUSSURE'S  
LINGUISTIC CONCEPTIONS IN THE ARMENIAN LINGUISTICS**

**DAVIT GYULZATYAN**

**SUMMARY**

In the last quarter of the 20<sup>th</sup> century, the Armenian linguistics has secured such achievements in the areas of linguo-philosophy and linguo-semiotics that the world-wide linguistic thought has so far only partly been able to apprehend it. In the judgment of the author, today marks the 4<sup>th</sup> phase in the history of linguistics, wherein the Armenian linguistics is the leading contributor.